Արձանագրություն 3

ՀՀԿԳՄՄՆԷԱՃԾՁԲ-25/14 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով բեռների փոխադրման ծառայությունների (Սփյուռքի կրթօջախների համար) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան

24.01.2025թ.
ժ.17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կարեն Մնացականյան /նախագահ/
Հանձնաժողովի անդամ՝ Ալվինա Էլոյան
Արմինե Պետրոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Մելքոնյան

1. **ՀՀԿԳՄՄՆԷԱՃԾՁԲ-25/14 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով գնման գործընթացի հրավերի վերաբերյալ ստացված հարցումների մասին**
(Կարեն Մնացականյան)

1.1 «ՀՀԿԳՄՄՆԷԱՃԾՁԲ-25/14» ծածկագրով գնման գործընթացի հրավերի վերաբերյալ 22.01.2025թ.-ին, ժամը 22:13:54-ին էլեկտրոնային աճուրդի eauction.armeps.am համակարգով ստացվել է հետևյալ հարցումը.
«Հարգելի՛ գործընկեր, խնդրում եմ տրամադրել հնարավորինս մանրամասն տեղեկատվություն բեռի տեսակի վերաբերյալ: Մասնավորապես ուսումնաօժանդակ նյութերի մասով: ՀՀ-ից Արտահանման համար հարկավոր է ապրանքները նույնականացնել Համաձայն ԵՏՄ ԱՏԳ ԱԱ կոդերի, մաքսային վճարների հաշվարկման համար: Խնդրում ենք նաև պատասխանել ի՞նչ է նշանակում Եվրոպական մի շարք երկրներ: Բեռնափոխադրումը ուղիղ կապ ունի հեռավորության հետ: Հնարավորության դեպքում խնդրում ենք նշել կոնկրետ քաղաքները: Կարևոր է նաև, թե նույն երկիր քանի՞ բեռնաբոխադրում է կատարվելու: Օրինակ ԱՄՆ-ի 10% բաժինը մի անգամով է առաքվելու, թե մաս մաս: Խնդրում ենք նաև տեղեկություն տրամադրել բեռի ծավալների վերաբերյալ»:

1.2 Պատասխանատու ստորաբաժանումը 22.01.2025թ. զեկուցագրով տեղեկացրել է, որ առաքվող բեռների վերաբերյալ մանրամասն տեղեկությունները, այդ թվում՝ ուսումնաօժանդակ նյութերի տեսակը, առաքման հստակ հասցեները (երկիր, քաղաք և այլն), բեռի ծավալը, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկություններ հնարավոր կլինի ունենալ պահանջվող գրականության հայտերը կրթօջախներից ստանալուց և ամփոփելուց հետո, որոնք պատրաստ կլինեն մինչև 2025թ. մարտի 31-ը ներառյալ: Միաժամանակ, ելնելով ստեղծված հանգամանքներից, պատասխանատու ստորաբաժանումից ստացվել է առաջարկ լուծարել հայտարարված գնման գործընթացը՝ հետագայում կրկին վերահայտարարելու նպատակով:

1.3 Հիմք ընդունելով 1.2 կետում պատասխանատու ստորաբաժանման առաջարկը, հանձնաժողովը որոշեց լուծարել գնման գործընթացը և այն հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

1.4 Հաստատել հետվյալ պարզաբանումը.

«Հաշվի առնելով Ձեր դիտարկումները գնման գործընթացը լուծարվելու է՝ այն վերահայտարարվելու նպատակով, քանի որ պահանջված տեղեկությունները տվյալ պահին առկա չեն»:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

---------- Կարեն Մնացականյան /նախագահ/

---------- Ալվինա Էլոյան

---------- Արմինե Պետրոսյան

---------- Արսեն Մելքոնյան /քարտուղար/